Թագվորը կըլոր բոյնն է,
Ան աղվորներուն սոյնն է.

Թագվորը կըլոր բոյնն է,
Ան աղվորներուն սոյնն է.

Թագվորն երթա լողնա ու գա,
Թագվորն երթա լողնա ու գա։

Հայ, իմ հայ, աննըման աղվոր,
Հայ, իմ հայ, աննման աղվոր։

Վարդանուշ Եղիկյան, Բինկյան

1 Բոյ—հասակ։
2 Սոյ—սերունդ, տոհմ։

## ՄԻ ԼԱՐ, ՔՈՒՐԻԿ, ՄԻ ԼԱՐ

*Не плачь, сестрица*

ՕՎՍԱՆՆԱ ՕՐՄԱՆՅԱՆ

97



Մի՛ լար, քուրիկ, մի՛ լար,
իս մի՛ լացցըներ։
Իս շատ են լացցուցած,
դուն մի՛ լացցըներ։
Մի՛ լար, մարիկ, մի՛ լար,
ես ավլի տի գամ.
Ասկի տասնըհինգ օր
արկովըս տի գամ։
Տարին ուր լըմննա,
Գըրկովըս տի գամ։



Сканировано с Cam

*Խաթ մը լաթ հնք բերեր,*
*Կըռնակըդ անցուր.*
*Քեզ տանել հնք էկեր,*
*Մարիկըդ լացցուր,*
*Ոտքըդ ուղուրով է,*
*Դուն մեզ խընդացուր։*

Օվսաննա Օրմանյան, Արմտան

*2 Իս—զիս, ինձ։*
*6 Ալվի—տարբերակ՝ ալվա, էլի, կրկին, դարձյալ։*
*11 Խաթ մը լաթ—մի ձեռք շորացու։*
*15 Ուղուրով է—խերով է, բարի է։*